



«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՐԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ» ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒԼԻՍ 1. 1877.

ԹԻԻ 7.



ՍԱՐԳԻՍ ԵՒ ԻՐ ՄԱՅՐԸ

**ՈՒՂԻՂ ԵՒ ՍԻԱԼ ՀԱՄԱՐԱՑ**

Անցեալ երեկոյ երբ խրատ կու տա յի տղուս զինքը Գրիստոսի յանձնել և անոր կամեցը համաձայն գործել տղաս ինձի այսպէս պատասխանեց.

«Ոյո, մայր իմ, կը հասկնամ ինչը սեղ կ'ուզես, բայց բարի զգացումներըս կէս վայրկեան միայն կը տեսնեմ».

«Ոյո, Սարգիս, այդպէս է. բայց որպէս զի շոգեկառք մը շիտակ ճամբէն շեղիլէ».

բէն շեղի, որչափ ժամանակ պէտք է: Կառք մը անգամ մը շիտակ ճամբէն շեղելէն ետքը որչափ մեղմով և արագ քայլէ, դէպ ի կործանում կը դիմէ: Ընդհակառակն մէկ վայրկեանի մէջ շոգեկառքը կրնայ սխալ ճամբէն շիտակ ճամբան դրուիլ և անվտանգ կերպով շարունակել ճամբան:

Այսպէս է նաեւ մարդուն սիրտը: Միայն վայրկեան մը կը բաւէ ըսելու. «Տէր, փրկէ զիս», Միայն վայրկեան մը կը բաւէ ըսելու. «Տէր, պահէ զիս այս մեղքէն», Վերջապէս վայրկեան մը կը բաւէ ի սրտէ ըսելու. «Տէր, առը ինձի քու Սուրբ հոգիդ, ըրէ զիս քու մանկիկդ, մի թողուր զիս, մի թողուր ինձ նաեւ հեռանալ քեռէն».

Ընդհակառակն վայրկեան մը միայն կը բաւէ ըսելու. «Վա՛շ, ի՞նչ վնաս ունի այսպէս ընել», Վայրկեան մը միայն կը բաւէ ըսելու. «Քրիստոս, նեայ ըլլալով մարդոց առակ նշաւակի ըլլալ չեմ ուզեր», Վայրկեան մը միայն կը բաւէ Աստուծոյ հոգին հեռացընել միտքը զբաղեցնելով այլ և այլ բաներու:

Իս այսպէս հոգին մէկ վայրկեանի մէջ կրնայ ուղիղ ճամբէն սխալ ճամբան և սխալ ճամբէն ուղիղ ճամբան անցնիլ, և կամ Աստուծոյ շնորհօքն անվտանգ հասնիլ կենսոյ վախճանը, կամ արագ դիմել ի կորուստի:

Ամէն մարդ թող ինքն իրեն հարցընէ. «Հոգիս ուղիղ թէ սխալ ճամբու մէջ է?»

**ՓՈՒՔՐԻԿ ՄԱՅՐ ՄԸ**

Անցեալ օր մեր զբայցիներէն մէկուն տունը գացի, և երբ ասն տեսիւմ հետ կը խօսէի, նստած սենեկիս գոռնէն տեսայ որ Մաննիկ և Դուսիկ ներսը ուրիշ սենեկի մը մէջ կը զբօս.

նուին : Մաննիկ տարը տարեկան էր ,  
և իր երեք տարեկան փոքր քոյրը  
զբօսցնելու համար այն սենեկին մէջ  
թողուած էր Նուենիկի քով : Նուենիկ  
չէր կրնար հինգ վայրկեան հանդարտ

պէս չեն փետեր : ըսաւ :  
Նուենիկ , «Սղջիկս , ես ի՞նչ ընեմ ,  
յանցածքը վրձնոյն է» ըսաւ :

Մաննիկ դարձեալ , «Ո՛հ , ո՛հ , ո՛հ ,  
եթէ այսպէս մազերս փետես , չես

կրնար ինձ մայր ըլ-  
լալ » ըսաւ :

Նուենիկ , «Ես ալ  
խորհեցայ որ մազե-  
րդ վրձնելէս պիտի  
չախորժիս , բայց ե-  
թէ հանդարտ կենաս  
քեզի բան մը պատ-  
մեմ » ըսաւ :

Ասոր վրայ Նուենիկ  
սկսաւ մեղմով վրձ-  
նել Մաննիկին մա-  
զերը , և Մաննիկ իր  
տեղէն չշարժելով  
հանդարտ կեցաւ , և  
Նուենիկ շատ կ'ուրա-  
խանար խորհելով թէ  
Մաննիկին մայր ե-  
ղաւ :

տի սողալով ներս կը մտնէինք : Հիւ-  
ղին մէջտեղը դրինք կանթեղը որ  
մեզ լոյս և ջերմութիւն պիտի տար .  
և որուն վրայ պիտի եփէինք մեր կե-  
րակուրները :

Այս միջոցին մեր պաշարը գրեթէ  
սպառած էր , բայց դեռ ոչ «Իկլ»  
նաւէն և ոչ անոր նաւաստիներէն  
հետք մը նշմարած էինք : Կը յուսայինք  
մէկ կամ երկու օրէն զանանք գտնել ,  
ապա թէ ոչ մեր վիճակն ալ գէշ պի-  
տի ըլլար : Հիւղը մնալով կը խօսակե-  
ցէինք , կ'ուտէինք , կը քնանայինք և  
կը սպասէինք որ հովը կտրէր և ձիւ-  
նը դադրէր : Սանտի երկու անգամ  
սողալով մինչև հիւղին բերանը դը-  
նաց , բայց մեզ լուր բերաւ թէ փո-  
թորիկը դադրած չէր :

Այսպէս երկու դիշեր անցուցինք ,  
օրերն հետզհետէ կը կարճնային , և  
քիչ ատենէն պիտի հասնէր ձմեռուան  
երկար գիշերը որ քանի մը ամիս կը  
տեւէ , և այնուհետեւ անհնար պիտի  
ըլլար մեզի ճամբորդութիւն ընել :

Վերջապէս Սանտի անգամ մ'ալ  
հիւղին դուռը երթալ ուզեց , և հրա-  
ցանն առնելով գնաց : Մենք ներ-  
սը նստած էինք , և ահա դուռսէն  
ձայն մը հասաւ մեր ականջը : Խոր-  
հեցանք թէ թերեւս հիւղին բերանը  
հասած են մեր բարեկամները , զորս  
փնտռելու ելած էինք : Երբ դուռսէն  
ներս ցուրտ օդ գալ սկսաւ , հասկը-  
ցանք որ Սանտի նեղ անցքին ծայրը  
հասած էր , և անմիջապէս լսեցինք  
Սանտիի ձայնը որ կը գոչէր . «Ըն-  
կերք , ալ մը կայ հոս , վազեցէք »  
Սանտի հիւղէն դուրս ելած ատենը  
տեսնելով որ քայլ մը անդին ահա որ  
արջ մը կար , յանկարծ սոսկման մէջ  
ինկած էր :

Սանտի արջուն նայեցաւ , և արջը  
խոշոր ճիրանները բանալով Սանտիին  
նայել սկսաւ , սակայն Սանտի առանց  
վրդովելու իր աչուրներն արջուն աչ-  
ուրներուն վրայ յառեց : Արջը կան-  
գուն մնաց այն տեղն ուր էր յառաջ ,  
ինչ որ Սանտի ըրաւ այս կէտին , շատ  
քաջասիրտ և երկամէ ջիղեր ունե-  
ցող մարդ մը միայն կրնայ ընել : Մինչ  
արջը կանգուն կեցած էր , Սանտի  
ծնկան վրայ եկաւ , և արջուն զուրբ  
նշան առնելով կրակ տուաւ հրացա-  
նին : Արջը կեցած տեղն անշունչ ին-  
կաւ : Մենք ներսէն դանակներ առ-  
նելով դուրս վազեցինք , և գազանին  
մօրթը հանելով միսը կտոր կտոր ը-  
րինք :

Եթէ արջը հիւղը մտնէր , զմեզ



«ԵՔԵՐ ՄԱՅՐ ՊԻՏԻ ԸՆԿԱՐ»

մնալ , ուստի դժուարին գործ մըն էր  
զայն զբօսցնել :

Այս լրագիրը կարգացող տղայք  
ալ երբեմն Մաննիկին պէս իրենց  
փոքրիկ եղբայրները կամ քոյրերը  
զբօսցնելու հարկին մէջ կը գտնուին ,  
ուստի արժան կը համարիմ անոնց ը-  
սել թէ փոքր տղայք զբօսցնելու եր-  
կու եղանակ կայ : Առաջին եղանակն  
է զբօսցնել տղայք ինչ կերպով որ  
ձեզ հաճելի է : Սակայն այս եղանա-  
կը հաճելի չէ փոքր տղոց , ուստի  
քիչ ատենէն ձանձրանալով կը սկսին  
լալ : Երկրորդ եղանակն է նոյեւ թէ  
որ կերպ զբօսանք հաճելի են տղոց ,  
և ըստ այնմ զբօսցնել զանոնք : Այս  
եղանակը հաճելի չէրեւիք ձեզ , բայց  
փոքր տղաքը զբօսցնելու ամենէն ա-  
ղէկ եղանակն է :

Մաննիկ ալ այս եղանակաւ կը  
զբօսցնէր զՆուենիկ : Սենեկին գունէն  
ներս նայելով տեսայ որ , Նուենիկ  
ձեռքը մազի վրձին մ'առած էր և  
«Մաննիկ , Մաննիկ , կը կանչէր :

Մաննիկ իր քրոջը մօտ գալով հար-  
ցուց անոր . «Նուենիկ , ի՞նչ կ'ուզես »  
Նուենիկ ըսաւ . «Մաննիկ , եթէ բա-  
րի ըլլաս և հանդարտ կենաս , մա-  
զերդ պիտի վրձնեմ , և քեզի մայր  
պիտի ըլլամ » : Այս ըսելով սկսաւ  
խիստ կերպով վրձնել իր քրոջը մա-  
զերը :

Մաննիկ ինդալով , «Ո՛հ , ո՛հ , ո՛հ ,  
մայրերն իրենց աղջկանց մազերն այս-

ՍԱՌՈՑՅՆԵՐՈՒ ՄԷՋ ՆԱԻ ՄԸ

(Շոր . Աւետարանի 6 Լուսնի և Գլուխ 6)

Վերջապէս մեր ընկերներն որ նա-  
ւուն մէջ մնացին , սիրով և ծափա-  
հարութեամբ ճամբայ դրին զմեզ :  
Մենք գիտէինք թէ ուր էր «Իկլ»  
նաւը , բայց նոյն նաւուն նաւաստի-  
ները մեր ուր ըլլալը չէին գիտեր ,  
ուստի հարկ էր մեզ այն նաւուն զտ-  
նուած կողմն երթալ , որպէս զի նա-  
ւաստիները մեզ փնտռելու ելելով  
սառույցներու մէջ անդին ասդին թա-  
փառելէն ետքը ցուրտէն և անթու-  
թենէն չկորսուէին :

Սառույցներու վրայ ճամբորդու-  
թիւն ընելը դիւրին բան չէ , հարթ  
տեղեր քիչ կը գտնուին . ընդհանրա-  
պէս դժուարին ճամբաներ և բլուր-  
ներ , նաեւ շատ անանցանելի տեղեր  
կան : Հարկ էր մեզ այն դժուարին  
տեղերուն բոլորտիքը պտտել , կամ  
տապալներով սառույցները կտորել  
և ճամբայ բանալ :

Մինչ մենք ճամբան էինք , սաստիկ  
փոթորիկով ձիւն գալ , և դառնաշունչ  
հով մը փչել սկսաւ : Սանտի տեսնե-  
լով փոթորիկին սաստկութիւնն ըսաւ .  
«Չիւնէ հիւղ մը շինելու ենք , ապա  
թէ ոչ ցուրտէն կը կորսուինք » :

Սանտիի վերատեսչութեամբ գոր-  
ծել սկսանք և չորս հոգի առնելու  
բաւական հիւղ մը շինեցինք : Հիւղը  
մտնելու երկար անցքին ծայրը դրան  
պէս փոքր ծակ մը թողուցինք , ուս-

պիտի գիշատէր և ուսեր, բայց մենք անոր կեր չեղանք, անոր միւր զմեզ ազատեց սովամահ կորնչելու վտանգէն:

Այնուհետեւ ձիւնը դադարեցաւ, և պայծառ արեւ մը ծագեցաւ: Հիւզին մէջ աղէկ ճաշ մը ընելէն ետքը, գետինը վորելով դահուկը դուրս հանեցինք, և արջուն միւր դահուկին վրայ դնելով սկսանք մեր ծամբան յառաջ տանիլ: Մեր քովը կողմնացոյց առած էինք զխոնարու համար թէ որ կողմը պիտի երթայինք: Չորս կողմը շատ նայեցանք «Իկ» նաւուն կայմերը տեսնելու, բայց բան մը չտեսնելով հասկցանք թէ կայմերն ինկած էին և նաւն ընկզմած էր: Վերջապէս տեսայ որ մեր առջեւէն կրակի մուխ կ'ելլէր, այս բանն ընկերներուս իմացուցի, և ամէնքս մէկէն դէպ այն կողմը գացինք: Քիչ մը ետքը սեւ կէտերու պէս բաներ տեսանք որ ձեան վրայ կը շարժէին, աւելի առաջ երթալով տեսանք որ մարդիկ էին: Սկսանք ձայն ընել անոց, և ոմանք մեր ձայնը լսելով սկսան մեր կողմը գալ, և քիչ ատենէն յաջողեցանք «Իկ» նաւուն նաւատիրներէն ոմանց ձեռուրները սեղծել:

Անհամբերութեամբ սկսայ հարցունել. «Ոմէնքդ ալ ազատեցա՞ք», նաւատիրներէն մին այսպէս պատասխան տուաւ. «Այո, ամէնքս ալ ազատեցանք: Կը պատրաստուէինք դէպ ի հարաւ երթալ, և եթէ ձեր ձայնը չլսէինք, շատ դէշ պիտի ըլլար մեր վիճակը, վասն զի մեր մէջ քանի մը հիւանդ կայ:» Ես դարձեալ չկրնալով ինքզինքս բռնել հարցուցի. «Դաւիթ Գրոֆորտ ո՞ր է?»

Այս հարցման հետեւեալ պատասխանը սրուեցաւ. «Հիւանդներէն մին ալ եղբայրդ է, Հիմա մենք մանաւանդ թարմ մսի պէտք ունինք:»

Քանի մը վայրկեան ետքը եղբայրս գրկացս մէջ էր, և ըսաւ ինծի, «Տոնալտ, որովհետեւ եկար զիս գրտնելու, այսուհետեւ կ'առողջանամ:»

Հիւանդներն արթուն միտէն ուտելով սկսան առողջանալ: Երկու օր ետքը կարող եղանք ձամբայ ելլել, և հիւանդները, մեր պաշարներն ու քանի մը պատուական բաներ դահուկներուն վրայ դնելով սկսանք դանոնք քաշել: Տաճանելի ձամբորդութենէ մը ետքը վերջապէս հասանք այն տեղն ուր կը գտնուէր «Պիթըրն» նաւը, և ձմեռն հոն նաւուն մէջ անցուցինք: Հետեւեալ ամառն սառոյց

ներուն մէջտեղէն ազատեցանք, և արդէն նաւուն բեռը լիցուած ըլլալով ճամբայ ելանք, և Տրնտի հասնելով յաջողեցանք եղբայրս Դաւիթ ողջամբ յանձնել մ'րս:

Մայրս «Լայըն» նաւուն նաւատիրներէն տեղեկութիւն առած էր «Իկ» նաւուն խորտակուելուն վրայ, և այն նաւուն նաւատիրներուն մարց, քերց և կանանց հետ կրած էր այն վիշտն ու տագնապը զոր սովորաբար կը կրեն անոնք որ սիրելիներն ունին պէկուծեալ ծովուն մէջ:



ԽՈՏԻ ԱՐՏԻՆ ՄԷՋ

Աննիձա կը պոռայ, կը կանչէ վասն զի Պարսամ անոր վրայ խոտ կը նետէ:

Խոտը կակուղ է, և երբ մէկուն վրայ կը նետուի անոր վնաս չի տար: Նաեւ արտին մէջ նոր քաղուած խոտն անուշ կը հոտի: Բայց Աննիձա պոռալու և կանչելու պատճառ ունէր: Աննիձայի ծանր էր Պարսամին անոր վրայ խոտ նետելը:

Տղայք խոտին մէջ թաւալելով, պտուկելով և զէրօր խոտի տակ թաղելով կը խաղային, և այնչափ բարձր ձայնով կը խնդային որ դուրսէն զանոնք դիտող մէկը կը կարծէր թէ այս տղայք այլ նաւ ձայն պիտի չկարենային հանել:

Քիչ մը ետքը Աննիձա յոգնեցաւ: Օդը շատ տաք ըլլալուն համար փոքրիկ աղջիկը շատ քրտնած էր, ուստի կ'ուզէր խաղը թողուլ, և քիչ մը հանդիստ առնուլ: Պարսամ և Երրոս դեռ յոգնած չըլլալով քիչ մըն ալ խաղալու զեցին: Երբ Պարսամ Աննիձայի վրայ խոտ նետեց, աղջիկը բարկանալով սկսաւ գոչել «Պարսամը չեմ սիրեր, աղէկ տղայ չէ:»

Կակուղ խոտն անդամ պատճառ

եղաւ Աննիձային վշտանալուն և պոռալ կանչելուն:

ՄՕՐ ՄԸ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԸ

Օր մը Յակոբիկ զգուշութեամբ բնալով սենեկին դուռն ուր մայրը հիւանդ պառկած էր՝ ըսաւ. «Մայր, կը հաճիս ինձի սորվեցնել Սուրբ գըրքէն համար մը, և այնուհետեւ համբուրելով զիս թողուլ որ երթամ անկողինս: Շատ քուն ունիմ, բայց մէկը չկայ որ աղօթք ընելու լսէ:» Այս ըսելով Յակոբիկ սկսաւ սաստիկ լալ և պոռալ. «Առանց աղօթք ընելու չեմ կրնար անկողին մանել:»

Մայրը որ հոգեվար պառկած էր, լսեց տղուն ձայնը: Թէեւ իր բուրբութիւնը պատահած բաները չէր զգար, բայց իր սիրելի որդւոյն լսցն արթնացուց զանի իր թմրութենէն, և դառնալով բարեկամի մը խնդրեց իր մանկիկը քովը տանել և իր գրկացը վրայ դնել: Մօրը խնդիրը կատարուեցաւ, և տղուն վարդագոյն այտերն և ոսկեհեր գլուխը հոգեվար մօրը սոճոյն և ցուրտ դէմքին քով դրուեցան: Մահամբռն մայրն ըսաւ. «Յակոբիկ, որդեակս, սա համարը կրկնէ և բնաւ մի մոռնար զայն. «Թէեւ հայրս ու մայրս զիս թողուն, բայց Տէրը իս պիտի ընդունի:»

Մանկիկն երկու կամ երեք անգամ որոշ կերպով կրկնեց այս համարը, և ետքը ըսաւ իր աղօթքը: Յետոյ իր մօրը ցուրտ և մեռելատիպ երեսը համբուրելով խաղաղութեամբ դնաց իր փոքրիկ անկողինը:

Հետեւեալ առաւօտ մանկիկն ինչպէս սովոր էր վնասուեց իր մայրը, բայց ցուրտ դիակ մը միայն գտաւ: Առջի երեկոյեան դասը վերջին դասն էր զոր մայրը տուաւ իր որդեկին, և տղան բնաւ չմոռցաւ այն դասը, և թերեւս երբեք պիտի չմոռնայ: Մանկիկը մեծնալով բարի մարդ եղաւ, և հիմա իր երկրին մէջ պատուաւոր և շահաւոր գործի մը զըլուխ կարգուած է:

Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ և իրեն յուսացողներէն բնաւ մէկը պիտի չդատապարտուի:



ՊԱՏԿԵՐ ԳԾԵԼ

Այն պատկերներն որ ամէն ամիս տղայոց Աւետարեբրի մէջ կը գրուին, պատկերհաններու ձեռքով նախ թուղթերու վրայ կը գծուին:

Պատկերհաններն այլ և այլ տեղեր կ'երթան, երբեմն ալ շատ երկար ճամբորդութիւններ կ'ընեն և նշանակութեան արժանի ինչ բան որ տեսնեն անոնց պատկերները կը հանեն:

Շատ անգամ երբ պատկերհանները գիւղերը կ'երթան, գիւղացիք անոնց գլուխը կը խռնին տեսնելու համար թէ սպիտակ թուղթին վրայ ինչպէս կը նկարուի պատկերը: Երբեմն իբր քսան տղայք կը ժողվուին պատկերհանին շուրջը: Տղօք գիրար կը հրեն, և իրարու ուսէն վեր նայելով պատկերհաններուն շուրջն այնպէս կը պատեն, որ խեղճ մարդիկը չլըրնալով տեսնել այն բաներն որոնց պատկերները կը հանեն, կը ստիպուին կամ տղաքը վաճառել, և կամ գործը դադարեցնել:

Այսպէս եղած է նաեւ այն պատկերհանին որ վերի պատկերը հանած է: Պատկերհանը տեսնելով որ տղայք հանգիստ պիտի չթողուն զինքը, նախ խորհեցաւ դատարանով վաճառել տղաք, բայց ետքը չուզելով զանոնք վախցնել, ինք գործը թողուց, և տղայոց պատկերը հանելով զրկեց լրագրին փոխանակ այն պատկերին զոր սկսած էր հանել բայց տղօք անոր բոլորաբար ժողվուելուն համար կիսկատար թողուց:

ԴԺՈՒԱՐԻՆ ԴԱՍԵՐ

Դպրոցի մը աշակերտներէն ոմանք թուարանութեան դասը դժուարին գտնելով իրենց մայրերէն կը խնդրեն միջնորդել դասատուին որ յիշեալ դասը թողու: Այսպիսի տղու մը մայրը տեսնելով որ իր տղան թուարանու-

թեան դասը սորվելու կը դժուարէր, դասատուին զնայ, և բարկացեալ գէկրով բտաւ. «Տղաս թուարանութեան ի՞նչ պէտք ունի. վարժագետ պիտի չըլլայ: Եթէ պնդես թէ տղան անպատճառ պիտի սորվի թուարանութիւն, դպրոցէն կը հանեմ:»

Ուրիշ տղայ մը երբ նոյնպէս կը գանգատէր իր մօրը, մայրը թուարանութեան դասին կարեւորութիւնը ցուցնելու համար այսպէս խօսեցաւ անոր. «Եթէ մեծնալով առեւտուրի սկսիս, առանց թուարանութիւն գիտնալու, շատերը քեզ պիտի խաբեն, կամ եթէ վարձով աշխատիս և ուրիշները վարձդ պակաս տան, աղէկ հաշիւ չդիտնալով պիտի չկրնաս իմանալ թէ անոնք քեզ խաբած են:

Հիմա ալ, եթէ հայրդ քանի մը դահեկան տայ քեզի և պատուիրէ այս ինչ բաներն առնել և աւելցած ստակը ետ բերել, աղէկ հաշիւ չդիտնալով պիտի չկրնաս հորդ պատուէրն ըստ արժանեոյն կատարել: Բայց եթէ աղէկ սորվիս թուարանութիւնը, առեւտուրի մէջ չես խաբուիր, և գործիդ վերաբերեալ հաշիւներդ տեսնելու համար ուրիշներուն կարօտ չես ըլլար: Աստի ջանալու ես թուարանութեան դասերն աղէկ սորվիլ:»

Այս երկու մայրերուն ո՞րը խորհեցաւ իր տղան ճշմարիտ շահը, և ըստ այնմ վարուելով սորվեցուց իր տղուն թէ ինչպէս պէտք էր յաղթել դժուարութեանց: Անտարակոյս վերջինը:

Սիրելի որդեակք, ջանացէք աղէկ սորվիլ ձեր դասերը դպրոցին մէջ և մի յաղթուիք դժուարութիւններէն, վանճի ձեռք մեծերը գիտնալով այն դասերուն կարեւորութիւնը յարմար դատած են այն բաները ձեզի սորվեցնել: Դուք սիրով և փութով աշխատեցէք, սէրը և փոյթն ամէն դժուարութեանց կը յաղթեն:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Այս հանելուկը տասը գրէ կը բաղկանայ:

- 1. Յակոր նահապետին և անոր աներոջ մէջտեղ որոշուած սահմանի քարին անուան առաջին գիրն այս հանելուկին առաջին գիրն է:
- 2. Յիշեցէք թէ Սուրբ գրքին մէջ ո՞ր թագուհւոյն վրայ ամենէն աւելի տեղեկութիւն տրուած է: Այն թա-

գուհւոյն անուան առաջին գիրը մեր հանելուկին երկրորդ գիրն է:

3. Յուրբ գրքին մէջ կ'ըն մը յիշուած է որ իր ազգականներուն մէկէն քանի մը կուռք գողցաւ: Այն կուռքերուն տիրոջ անուան առաջին գիրն այս հանելուկին երրորդ գիրն է:

4. Նոյս տասանով ազատուած մարդոց մէջ զանուելով, ջրհեղեղէն ետքը բոլոր կենացը մէջ անիծից տակ մնացող մարդուն անուան առաջին գիրն այս հանելուկին չորրորդ գիրն է:

5. Աշուրներն աղէկ չտեսնելուն համար տղուն միջոցաւ խաբուող մարդուն անուան առաջին գիրն այս հանելուկին հինգերորդ գիրն է:

6. Հանելուկին վեցերորդ գիրն առաջին գիրն է այն քաղաքին անուան ուր կը բնակէին խալայէլի թագաւորները, և քաղաքին անունն Աւետարանին մէջ յիշուած է մեր Տիրոջը կենաց ջուրին նկատմամբ ըրած խօսքին առթիւ:

7. Հանելուկին եօթներորդ գիրն Եսաւի միւս անուան առաջին գիրն է:

8. Ժամանակաւ հովիւ, պատեւրազմող, թագաւորի մը պալատան մէջ երաժիշտ և ապա թագաւոր եղող անձի մը անուան առաջին գիրն այս հանելուկին ութերորդ գիրն է:

9. Հրեայք գերի երթալէն ետքը, քահանայ մը աւելի քան հազար ընկերներով երուսաղէմ դարձաւ: Այս քահանայն իր սիրտը պատրաստած էր Աստուծոյ օրէնքը փնտռելու և զանի գործարկելու և երուսաղէմ դարձած էր տաճարը նորոգելու և Հրեաները քաջալերելու որ զԱստուած պաշտէին: Այս քահանային անուան առաջին գիրը հանելուկին իններորդ գիրն է:

10. Հանելուկին տասներորդ գիրն առաջին գիրն է այն մարդուն անուան, որ աշխարհի մէջ ամենէն առաջ մեռեալ մարդու մը դիակը տեսաւ:

Հանելուկին տասը գրերը մէկէն կը բաղկացնեն թագաւորի մը անունը որ յիշուած է Պօղոս առաքելոյն թղթերէն մէկուն մէջ:

ԱՆՑՅԱԼ ԱՄՍՈՑ ՀԱՐՅԱՆՑ ՊԱՏԱԽԱՆ Կողմին Կիպրոս էր: Մարդը որուն աշուրները կուրցան Սերգիոս Պօղոս էր: Քարոզիչներն էին Բառնաբաս և Պօղոս:

Ամբիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն Իմքազիր ձ. ֆ. ԿՐԻՆ Տիգրանէրթր եօզուլու. Ամբիկան խոս

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՐ ՊՕՅԱՅԱՆ